# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**15 հունիսի 2015 թվականի N 63-Ա**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգով, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1. ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանին և մարզպետի օգնական Զարզանդ Նիկողոսյանին 3 օրով՝ 16.06.2015թ. մինչև 18.06.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանին 2 օրով՝ 16.06.2015թ. մինչև 17.06.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ պաշտոնական գործերով:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանին 4 օրով՝ 17.06.2015թ. մինչև 20.06.2015թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով
4. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Արագած Ղևոնդյանին՝ իրեն ամրակցված ԿԻԱ Օպտիմա մակնիշի 041 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով, 1-ին կետով նշված ժամանակահատվածում սահմանված կարգով ապահովել սպասարկումը:
5. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Անտոն Գրիգորյանին՝ իրեն ամրակցված Տոյոտա Քամրի մակնիշի 800 LL 60 պետհամարանիշի ավտոմեքենայով, 3-րդ կետով, նշված ժամանակահատվածում սահմանված կարգով ապահովել սպասարկումը:
6. Աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

*ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ* *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*2015թ. հունիսի 15*
*ք. Կապան*